

«Շիրակացու ճեմարան»  
միջազգային գիտակրթական համալիր  
ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԲԱՑ ՕԼԻՄՊԻԱԴԱ  
2025-2026  
Մաթեմատիկա (7-րդ դասարան)



Ազգանուն Անուն Հայրանուն \_\_\_\_\_

Դպրոց \_\_\_\_\_

Դասարան \_\_\_\_\_ Խումբ \_\_\_\_\_



Մաթեմատիկան թագուհին է բոլոր գիտությունների...

Կ. Գառու

Մաղթում ենք հաջողություն:

1. Գտնել  $x$ -ը, եթե  $\frac{x!}{6!} = 7!$ : (Ցուցում՝  $x! = 1 \cdot 2 \cdot 3 \cdot \dots \cdot x$ ): (4 միավոր)

2. Հաշվել  $\frac{ab-ac+bc}{abc}$  արտահայտության արժեքը հարմար եղանակով, եթե  $a = \frac{1}{2025}$ ,  $b = \frac{1}{2026}$ ,  $c = \frac{1}{2027}$ :  
(4 միավոր)



3. Հայտնի է, որ  $\overline{aba}$  թիվը բաժանվում է 13-ի: Բաժանվում է արդյոք 13-ի  $\overline{bab}$  թիվը: Պատասխանը հիմնավորել: (4 միավոր)

4. Արձակուրդների ընթացքում մի դասարանից 23 աշակերտ մեկնեցին Գյումրի՝ էքսկուրսիայի, 19-ը՝ Մեղրի և 7-ը՝ Դիլիջան: Առնվազն քանի՞ աշակերտ կարող է լինել այդ դասարանում, եթե յուրաքանչյուր աշակերտ այցելել է ոչ ավելի, քան երկու քաղաք: Պատասխանը հիմնավորել: (4 միավոր)

5. Ըստ նկարի գտնել  $x$  անկյունը, եթե  $CD$ -ն եռանկյան միջնագիծն է,  $\angle BCD = 15^\circ$ ,  $\angle ADC = 45^\circ$ : (4 միավոր)

